Հաստատված է
ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի
2024թ. դեկտեմբերի 21-ի նիստի
թիվ 1 որոշման 3-րդ կետով

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Է. Ղազարյան
2024թ. դեկտեմբերի 21

«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

(2025 ԹՎԱԿԱՆ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի գործունեության հիմնական ուղղությունները համապատասխանում են ԳՊՀ 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրին՝ հաստատված ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից, 2023 թվականի հունվարի 21-ին:
2. ԳՊՀ գործունեության արժեքային հիմքն են կազմում մարդասիրությունը, սոցիալական արդարությունը, ակադեմիական ազնվությունը, օրինականությունը, ժողովրդավարական սկզբունքները, մասնակցային կառավարումը, հրապարակայնությունը, հաշվետվողականությունը, կարգապահությունը, պատասխանատվությունը, բարոյական նորմերի պահպանումն ու իրավական կարգադրագրերի պահանջների կատարումը, ավանդույթների և նորարարության զուգակցումը:
3. Գավառի պետական համալսարանի գործունեության նպատակն է առաքինի մարդու, բարեխիղճ քաղաքացու և որակյալ մասնագետի պատրաստումը:
4. Գավառի պետական համալսարանի 2025 թվականի գործունեության կարգախոսն է. «Կրթությունը՝ հաջողության ճանապարհ»:

5. ԳՊՀ 2025 թվականի զարգացման ծրագիրը նախատեսում է միջոցառումներ գործունեության հետևյալ հիմնական ոլորտներում՝

1) կրթական, սոցիալ-մշակութային,

2) գիտահետազոտական, նորարարական,

3) կառավարչական, ֆինանսատնտեսական, ռեսուրսային ապահովման,

4) հանրային պատասխանատվության, արտաքին կապերի և միջազգայնացման,

5) հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման:

I. ԿՐԹԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. ԳՊՀ-ում որակի բազմաշերտ մշակույթի արմատավորում.

1) ուսուցման և ուսումնառության որակի շարունակական բարձրացում,

2) դասախոս-ուսանող հաղորդակցության և համագործակցության նոր որակի ապահովում,

3) ուսանողների մտածողության որակի բարձրացում, արժեքային բարձր չափանիշների ձևավորում՝ ողջ կյանքի ընթացքում որակյալ մտածողության, ճիշտ որոշումների ընդունման և արժեքահեն վարքի դրսևորման նպատակով:

2. Կրթության որակի ապահովման ներբուհական համակարգի շարունակական բարելավում.

1) որակի ապահովման կառուցակարգերի արդյունավետության բարձրացում,

2) կրթության որակի մշտադիտարկման նոր մեթոդների և գործիքակազմի կիրառում,

3) շահառուների լայն ներգրավում որակի ապահովման գործընթացներում,

4) ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման գործընթացների համադրելիության ապահովում Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) որակի չափանիշներին:

3. Գավառի պետական համալսարանի՝ 2022 թվականի ենթակառուցվածքային հավատարմագրման արդյունքում համալսարանի մշակած բարելավման ծրագրի

կատարում, համապատասխան արդյունքների ներկայացում Որակի ապահովման ազգային կենտրոնին:

4. Բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) բարելավում, մասնագրերի արդիականացում, ծրագրերի ներքին աուդիտի անցկացում, դրանցում ամրագրված վերջնարդյունքների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանեցում ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, աշխատաշուկայի արդի պահանջներին, սովորողների կրթական ակնկալիքներին, ԵԲԿՏ որակավորումների համընդհանուր շրջանակին, ԳՊՀ իրականացրած եվրոպական ծրագրերին:

5. Ուսանողների ուսումնական, արտադրական, մանկավարժական, նախաավարտական և այլ տեսակի պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում՝ կիրառելով աշխատանքահեն կրթության մեթոդներ:

6. Բակալավրիատի բոլոր ՄԿԾ-ների ուսանողների համար ինքնուրույն հետազոտական աշխատանքների կազմակերպում, արդի կրթական տեխնոլոգիաների, արհեստական բանականության ընձեռած հնարավորությունների օգտագործում, սովորողների հետազոտական հմտությունների, քննական-վերլուծական, ստեղծագործական կարողությունների զարգացում:

7. ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգի և ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման առցանց ծրագրի համալրում ուսումնական նոր նյութերով, թեստերով, ակադեմիական տեղեկագրերի էլեկտրոնային տարբերակի կիրառում:

8. ԳՊՀ դիմորդների համար ՄԿԾ-ների վերաբերյալ ուղեցույցների մշակում և հրապարակում, նրանց հետ նպատակային աշխատանքի կատարում և նախապատրաստում բուհի ընդունելությանը, տարբեր միջոցներով, իրական և թվային միջավայրերում համալսարանի վերաբերյալ հավաստի տեղեկատվության տարածում:

9.ԳՊՀ ուսանողների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի միասնական էլեկտրոնային շտեմարանի ստեղծում, գրագողության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում, գրագողության դեպքերի բացահայտման նոր էլեկտրոնային ծրագրի գործարկում:

10. ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, տնտեսագետների, բնագետների և այլ ակումբների գործունեության ակտիվացում, ուսանողների ստեղծագործական ներուժի բացահայտում, սոցիալ-մշակութային միջոցառումների շարունակական կազմակերպում, ուսանողների համակողմանի զարգացմանը, նրանց մտավոր, ստեղծագործական, լեզվական, հաղորդակցական, տեխնիկական, կազմակերպական, առաջնորդության կարողությունների, կյանքի հմտությունների ձևավորմանը միտված ծրագրերի իրականացում:

II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Գավառի պետական համալսարանի ամբիոնների գիտահետազոտական գործունեության ուղղություններով հետազոտությունների կատարման, ցիտման բարձր գործակից ունեցող ազգային և միջազգային շտեմարաններում ԳՊՀ դասախոսների գիտահետազոտական աշխատանքների հրապարակման խրախուսում:
2. ԳՊՀ տարեկան գիտաժողովի կազմակերպում և զեկուցումների հրապարակում համալսարանի գիտական պարբերականում՝ հոդվածներին ներկայացվող բովանդակային և տեխնիկական պահանջների պահպանմամբ:
3. ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի համացանցային հարթակի համապատասխանեցում «Բաց գիտության» համակարգի սկզբունքներին և պահանջներին:
4. ԳՊՀ ուսանողներին հետազոտական աշխատանքի սկզբունքների և կանոնների ներկայացում, պարտադիր և լրացական դասընթացների կազմակերպում, գիտահետազոտական համապատասխան ոլորտի անհրաժեշտ իրազեկությունների ձևավորում, գիտահեն մտածողության զարգացում:
5. Եվրոպական միության դրամաշնորհային ծրագրերի միջոցներով գիտահետազոտական աշխատանքի տեխնիկական, տեխնոլոգիական բազայի, սարքերի և սարքավորումների արդիականացում, լաբորատորիաների,

լսարարանների, մասնագիտական աշխատասենյակների հնարավորությունների համալրում, ենթակառուցվածքների բարելավում:

6. ՀՀ և օտարերկրյա բուհերի, գիտահետազոտական ինստիտուտների և մասնավոր կազմակերպությունների հետ համատեղ գիտահետազոտական դրամաշնորհային նախագծերի իրականացում:

7. Գավառի պետական համալսարանի՝ ‹‹Վիրտուալ համալսարան›› համալիր ծրագրի բաղադրիչների փուլային ներդնում:

III. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Գավառի պետական համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն, ռիթմիկ, փոխհամաձայնեցված աշխատանքի կազմակերպում ու համակարգում, բուհի գործունեության բոլոր ոլորտների ճկուն, օպերատիվ և արդյունավետ կառավարում:

2. ԳՊՀ գործունեության իրավական հիմքերի կատարելագործում՝ ՀՀ օրենսդրական կարգավորումներին և համալսարանի զարգացման ներքին պահանջներին համապատասխան:

3. ԳՊՀ ֆինանսական կայունության ապահովում, ֆինանսական հոսքերի բազմազանեցում, ներբուհական տնտեսության կազմակերպման ծախսարդյունավետ մեխանիզմների և այլընտրանքային մոդելների ներդնում:

4. ԳՊՀ նյութատեխնիկական ռեսուրսների փուլային արդիականացում ու համալրում, ուսանողների, դասախոսների և աշխատակիցների համար անվտանգ կրթական և աշխատանքային միջավայրի ապահովում, համալսարանի ֆիզիկական, սոցիալական, վիրտուալ գրավչության շարունակական աճ:

5. ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների առաջընթացը գնահատող կատարողականի արդյունքային ցուցանիշների (ԿԱՑ) համակարգի և դրանց հիման վրա խրախուսման համակարգ սահմանելու մեխանիզմի մշակում՝ ելնելով ՀՀ կրթության ազգային քաղաքականության և բուհի ռազմավարական առաջնահերթություններից ու հնարավորություններից:

ԳՊՀ տարեկան գործողությունների պլանի կատարողականի արդյունավետության ցուցիչների ապահովում:

6. ԳՊՀ-ում թվային արդի տեխնոլոգիաների, նորարարությունների խթանման ծրագրերի մշակում՝ դիմելով միջազգային, հասարակական և այլ ազգային ու միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցության նպատակով:

7.ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմերի մասնագիտական զարգացման դասընթացների մշակում և վերապատրաստումների իրականացում:

8.ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարունակական մասնագիտական զարգացումը խթանալու նպատակով աշխատանքի վարձատրության և խրախուսման նոր կառուցակարգերի մշակում և կիրառում՝ ֆինանսական հնարավորությունների սահմաններում:

9.ԳՊՀ ենթակառուցվածքների, մշակութային միջոցառումների և մարզական պարապմունքների դահլիճների վերանորոգում և կահավորում՝ հնարավորինս համապատասխանեցնելով ներառականության պահանջներին:

10. ԳՊՀ գրադարանի գրքերի պատվերի ու տրամադրման, հետվերադարձի գործընթացների էլեկտրոնային կառավարում:

11. ԳՊՀ պատմագիտական թանգարանի հավաքածուի թվայնացում:

12.ԳՊՀ գործավարության թվայնացում, փաստաթղթաշրջանառության լավարկում, ներքին ու արտաքին շահառուներին անհրաժեշտ փաստաթղթերի, տեղեկագրերի, տեղեկանքների՝ էլեկտրոնային եղանակով տրամադրում:

IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. ԳՊՀ-ի կողմից հանրային պատասխանատվության ծրագրերի իրականացում, ՀՀ Գեղարքունիքի մարզի, Գավառ բազմաբնակավայր համայնքի սոցիալ-մշակութային զարգացմանը նպաստում:

2. Տարածաշրջանի բնակչության կրթական կարիքների ուսումնասիրում, դրանց համապատասխան վերապատրաստման դասընթացների, լրացական կրթական ծրագրերի մշակում և իրականացում:

3. ԳՊՀ-ում շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերի համար անհրաժեշտ նյութատեխնիկական պայմանների ապահովում և ծրագրերի իրականացում, խորհրդատվական ծառայությունների մատուցում:

4. Դպրոցների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ աշխատանքի նոր ձևերի ու բազմազան կառուցակարգերի կիրառում, աշակերտներին մասնագիտական կողմնորոշման հարցում աջակցություն, ներգրավում ուսումնական գործընթացին, համալսարանի սոցիալ-մշակութային միջոցառումներին:

5. Գործատուների հետ համագործակցության նոր ձևաչափերի կիրառում, նրանց ներգրավում աշխատանքի վրա հիմնված կրթության կազմակերպման, ուսանողների ինքնուրույն աշխատանքների բազմազանեցման, դրանց արդյունքների ստուգման և գնահատման գործընթացներում:

6. ԳՊՀ շրջանավարտների հետ աշխատանքի ակտիվացում, նրանց ներուժի նպատակային օգտագործում:

7. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, սոցիալապես անապահով ընտանիքների երեխա-ուսանողների, հաշմանդամություն ունեցող ուսանողների ներառական կրթության ապահովում, նրանց կարիքների ուսումնասիրում, ակնկալիքների բացահայտում և դրանց բավարարման նպատակով միջոցների ձեռնարկում:

8. Քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակներում առաջին բժշկական օգնության, աղետների ռիսկերի կառավարման վերաբերյալ տեղեկատվության տարածում ուսանողների, դասախոսների և աշխատակիցների, ինչպես նաև աշակերտների և այլ շահառուների շրջանում:

9. Արտասահմանյան գործընկերների, միջազգային դրամաշնորհատու կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորությունների ուսումնասիրում և արտաքին կապերի ընդլայնում՝ որակյալ, ցկյանս, ‹‹կանաչ››, թվային, ներառական կրթության կազմակերպման և այլ ուղղություններով:

10. Միջազգային, այդ թվում՝ ԱՊՀ անդամ երկրների, ԵԲԿՏ-ի միջբուհական համագործակցության, ակադեմիական շարժունության, գիտահետազոտական և այլ ծրագրերին ԳՊՀ-ի մասնակցության ակտիվացում:

11. Միջազգային գիտաժողովների և աշխատաժողովների կազմակերպում:

12. ԳՊՀ-ի՝ հանրության հետ կապերի և միջազգայնացման նոր հայեցակարգի և դրանից բխող փաստաթղթերի մշակում և գործարկում՝ բարելավելով ԳՊՀ գործունեության մասին հանրային իրազեկման և համալսարանի միջազգայնացման կառուցակարգերը:

V. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2023-2027 թվականների հակակոռուպցիոն ծրագրի դրույթների կատարում, բուհի ազնիվ ակադեմիական միջավայրի պահպանում, համալսարանի հակակոռուպցիոն քաղաքականության շարունակական իրականացում:
2. ԳՊՀ գործունեության բոլոր ոլորտներում կոռուպցիոն վտանգների բացահայտման, կանխարգելման և վերահսկման մեխանիզմների կատարելագործում:
3. ԳՊՀ էթիկայի կանոնների, ընդհանուր, մասնագիտական և մանկավարժական բարեվարքության նորմերի վերանայում և համալրում, դրանց պահպանում ու տարածում, ուսանողների շրջանում էթիկական վարքագծի արժևորում:
4. Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների կենսագործում, բուհի ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացում:
5. ԳՊՀ ուսանողների իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը միտված բաց դասախոսությունների և քննարկումների պարբերաբար կազմակերպում՝ ներգրավելով նաև բարձր դասարանների աշակերտների, համայնքի անդամների, արտաքին գործընկերների:
6. Իրավագիտության բաժնի դասախոսների և ուսանողների միջոցով աշակերտների շրջանում իրավագիտակցության բարձրացման, հակակոռուպցիոն դիրքորոշման ամրապնդման, մեդիագրագիտության և այլ ուղղություններով ծրագրերի մշակում և իրականացում:

7. Հանրության շրջանում Գավառի պետական համալսարանի նկատմամբ վստահության ամրապնդում, բուհ ընդունվող դիմորդների թվի ավելացում, ուսանողական համակազմի քանակական ու որակական ցուցանիշների բարելավում: